

ՍԵՐԳԷՅ ԲՈՒԼԳԱԿՈՎ

ԻՆՏԵԼԼԻԳԵՆՑԻԱ

ԵՒ

ԿՐՕՆ

Փոխադրեց
ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1908

ՍԵՐԳԷՅ ԲՈՒԼԳԱԿՈՎ

ԻՆՏԵԼԼԻԳԵՆՑԻԱ

ԵՒ

ԿՐՕՆ

(«Русская Мысль». *մարտ*, 1908 *թ.*)

Փոխադր. ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Արտատպուած ԱՐԱՐԱՏ ամսագրի մայիս—յունիս համարից



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1908

ԻՆՏԵԼԼԻԳԵՆՑԻԱ ԵՒ ԿՐՕՆ

(Խօսուած ուսանողների եւ ուսանողուհիների ժողովում.)

Ձեզանից մի քանիսին իմ գիտական և գրական աշխատանքներից ես յայտնի է կրածս հոգեկան տանջանքը, որի հետևանքը այն եղաւ, որ ես Աստուած չճանաչող աշխարհահայեցողութեան յենարան կազմող որոշեալ գիտական և փիլիսոփայական նախադրեալները քննութեան առաջ խելքով և սրտով, գիտութեան միջոցով և կեանքով. քայլ առ քայլ նահանջելով՝ գիտակցաբար վերադարձայ այն հաւատին, որը տանում է դէպի խաչեցեալ Աստուածը և Նորա Աւետարանը—մարդու և Նորա կեանքի համար [illegible], բարձրագոյն և խորագոյն ճշմարտութիւնը։

Դէպի աւետարանական վարդապետութիւն տանող ճանապարհը և Նորա ըմբռնման եղանակը պատմական և անհատական տեսակէտներից կարող է շատ բազմատեսակ լինել։ Մեր դարի զաւակները առանձնապէս մտաւոր և բարոյական շատ արգելքներ պէտք է յաղթահարեն, որպէս զի ըմբռնեն այն՝ ինչ որ որպէս շնորհ յայտնւում է մանկական—պարզ, բայց մաքուր սրտին և գուցէ աւելի լիութեամբ և սրբութեամբ, քան մեզ։

Ինչպէս մտածում է մեր ժամանակի կիսակիրթ ամբոխը, քրիստոնէութիւնը միմիայն գիտնականների և փիլիսոփաների կամ կանանց, երեխաների և տգէտ խուժանի կրօն չէ։ Քրիստոնէութեան համամարդկային և համաժողովրդական լինելու ճշմարիտ ապացոյցը այն է, որ Նա բոլոր չափու հաւատոյ, անձնական արիաջան գործունէութեան, և բարի ձգման համահաւասար կերպով մատչելի է և խորիմաստ փիլիսոփային և երեխային, Օգոստինոսին և հովուին, Պասկալին կամ Գլադստոնին և ռուս գիւղացուն։ Արտաքին մարդու կեղևի, արտաքին գործունէութեան և ունայնութեան ներքոյ իւրաքանչիւրը պահպանում իւր մանկութեան, սկզբնական աստուածային սրբութեան մի մասնիկ, որի համար ողբում է Ջեխովի հերոսուհին, Նորա վերջին հեղինակութեան մէջ, ասելով «Ո՜հ իմ մանկութիւն, ո՜հ իմ սրբութիւն»։ Այս զգացումը խորն է և առաջանում է հոգու խորհրդաւոր արմատներից, ուստի և բոլոր փորձառական և պատմական տարբեր սահմանաւորումներից զօրեղ է։ Իբրև կրօնական փորձառութիւն՝ այդ զգացումը իւրաքանչիւրը ունեցել է և այդպիսի մէկին նորա մասին չպէտք է

(«Русская Мысль» *մարտ,* 1908 *թ.*)

պատմել, բայց միևնոյն ժամանակ կրօնական կեանքի բացակայութեան շնորհիւ՝ մեր ինտելլիգենցիայի համար այդ զգացումը օտար, անհասկանալի և վերացական է երևում։

Ո՛վ որ մեր օրերում ռուս ինտելլիգենցիայի հետ խօսել կփորձի ոչ թէ ներկայիս, գլխաւորապէս, քաղաքական խնդիրների մասին, այլ կեանքի ընդհանուր նպատակների և նորա կրօնական իմաստի և ով որ այդ իմաստը, ինձ նման, տեսնում է միայն քրիստոնէական կրօնի մէջ, նա արդէն իւր դէմը կունենայ յանձին ժամանակի ոգու մի, թէև անդէմ, բայց զօրեղ և վերին աստիճանի իրական հակառակորդ։ Անկրօն միջավայրը ընդհանրապէս յատուկ է նոր ժամանակին, մանաւանդ ԺԸ-ի վերջին և ԺԹ դարին։

Այս զարտուղութիւնը բնորոշելու ժամանակ պէտք է եւրոպական քաղաքակրթութիւն ունեցող զանազան երկիրների մէջ տարբերութիւն չդնել. չի կարելի չնկատել, օրինակ, անգլօ—սաքսոնական կրօնական ոգին, որը պահպանուել է մինչև մեր օրերը և որը անգլօ—սաքսերը տարածել են ովկիանոսի միւս կողմը, Նոր-Զելանդիա և Միացեալ նահանգները։ Դեռ եւ վերջին ժամանակները Անգլիան ունէր կրօնական զօրեղ շարժում, որը յայտնի էր Ուէլսի վերածնութիւն անունով՝ Ուէլսի ածխահանքերի բանուորների մէջ ծնունդ առնելու պատճառով, որոնք ամենազօրեղ բանուորական կազմակերպութիւններից մէկն էին կազմում. Լրագիրները հաղորդում էին ամէնօրեայ օրհներգութիւնների և աստուածպաշտութեան մասին, որոնք սկսւում էին Միտեր-Կառամազովի ամէնօրեայ օրհներգութեան վերջացնելու ատեն տարածուած խօսքերը. «եւ այն ժամանակ մենք, ամէնօրեայ բնակիչներս, երկրի սրտից ողբերգական օրհներգ կերգենք Աստուծոյ, որի մօտ է արքայութիւնը». «Կեցցէ Աստուած եւ Նորա արքայութիւնը»։

Անգլօ—սաքսոնական կրօնականութեան մէջ ամենանշանաւոր երևոյթը այն է, որ սա միայն համարեայ ժողովրդին չէ պատկանում, որքան է ռուսական կրօնական չվերնամտութիւնը և անգլիական ինտելլիգենցիան կրօնական ոգին որպէս «Նախապաշարմունք» չի ժխտում. Պրոֆ. Շուլցէ-Գևերնիցը ասում է իւր նորագոյն երկասիրութեան մէջ*. «Մինչև այսօր էլ կրօնը անգլօ—սաքս քաղաքակրթութեան հիմքն է։ Սրտագին երևոյթները այնքանը հաստատուած են իրարանից քաղաքակիրթին։ Մինչև այսօր էլ կիւրակին որը իւր կնիքը պահպանում է ամբողջ երկրի վերայ Հոգևորականութեան հետ համերէս են զարկ իրեն քարոզիչներ

---

*) «Բրիտանիական իմպերիալիզմ եւ անգլիական ազատ վաճառականութիւնը Ի. դարու սկզբին». Լայպցիգ 1906 Թ.

աշխարհականներ, բժիշկներ, իրաւաբաններ, քանտօրների առաջնորդներ և այս ոչ միայն աղօթատեղերում, այլ առաւելապէս բաց երկնքի տակ. օրինակ մեծ քաղաքների զբօսատեղերում, ուր ամբոխի տեղ ծառայում են կառքեր կամ նաւթերի անկիւնաքարեր: Մի կողմը գնում է քարոզչի Ս. Գրքի խօսքերով ծածկուած վահանը, որը և պատասխանն է տալիս քարոզիչներին. մի այլ տեղ դժուարութեան քայլերը մնում են օդեանները և ներքագործների որջերը՝ հանդէս գալով որպէս նուաճող քրիստոնէութեան պաշտպաններ»: Ազգի առաջնորդող դասակները և հոգևոր առաջնորդները մեծ կամ փոքր չափով հաւանում են ազգային այդ կրօնական ոգին: Անգլիայի պետական նշանաւոր գործիչներ Դիզրայէլի (լորդ Բիքօնսֆիլդ) և Գլադստոն խանդավառ քրիստոնեաներ էին և ամենայն օր կարդում էին Ս. Գիրքը: Գլադստոն, որի գրչին է պատկանում «Ս. Գրքի անսասան ժայռը» անունով հեղինակութիւնը, սիրում էր քարոզել Հաւարտենում և ընդհանրապէս տարածայնում էր այսպիսի համոզմունք. (կնոջը դրած նամակների մէջ). «Ես համոզուած եմ, որ մարդկութեան երջանկութիւնը այժմ քաղաքակրթութիւնից կախուած չէ. իսկական կեանքը տեղի է ունենում մարդի աշխարհում, ուր և կատարւում է մահուան յարմարանքը մարդկութեան ամենամեծ գանձի—հաւատքի վերայ, որ տանում է դէպի Աստուած և Քրիստոսի Աւետարանը»: Անգլիայի նախարարապետ Բալֆուրը նոյնպէս ի պաշտպանութիւն քրիստոնէական վարդապետութեան գրեց «Հիմունք հաւատոյ» վերնագրով գիրքը: Անշուշտ նոր ժամանակի կործանիչ չարժումից Անգլիան էլ ազատ չի մնացել: Կրօնի հակառակ արտայայտած ոչ պակաս կատաղի և զօրեղագոյն պատմագրութիւնները անգլիական մտքի դարբնոցումն են յայտնուել: Հոբսը և Հիւմը, Բենթամը և որոշ սահմանափակ էլ Դարվինը և Սպենսերը ցոյց տուին իրենց աղդեցութիւնը, անկասկած, կարելի է ասել, աւելի մեծ չափով մտքի ցանկացի վերայ, քան իրենց հայրենիքում: Բայց Անգլիայում ոչ մի երկրում իմաստասիրական կրօնի ժխտումները, այնպիսի խմբակային արտայայտութիւն չի առնում՝ ինչպէս Անգլիայում:

Անգլիական մտքի պատմութեան մէջ ի վաղուց հետէ յայտնի են եղել և մինչև այսօր էլ կռւում են երկու հոսանք, որոնցից մէկը թէև քիչ նշանակալ խնդիրների մէջ, բայց այդ ցըլի մէջ են ռացիոնալ ազգային մտքի և հանճարի գաղափարը, ռացիոնալիզմն ու ազգային փառքի և գործնական աշխարհայեացքը:

Այդ մտքերը նոյնը մեն, որոնք ժողովրդի հետ ի միասին դիւանագիտական խնդիրների ... և ... դէպի ... Սահմանուած ... ժողովրդական հաւատացեալները ... Այդ քչերի յանկացած ... ժամանակներում, ...

Տիւտչեւին, որոշեալ տեսակէտից Լեռմոնտովին, Գոգոլին, Խոմեակովներին, Ակսակովներին, Վ. Սոլովեւին, Դոստոեւսկուն, Գրիգորեվին, Ա. Տոլստոյին, նոյն իսկ Նեկրասովին և Լեւ Տոլստոյին, որչափով սա ընդհանրապէս կանգնած է կրօնական հողի վերայ։

Իսկ միւս—հակակրօնական գաղափարական հոսանքը, որի շարքերումն էին առաջադէմ հրապարակախօսներ և հասարակական գործիչներ, իւրացրել էր ռացիօնալական անաստուած աշխարհահայեցողութիւն, որը մեծ ալիքի նման ծաւալուեց և այսօր ռուս ինտելլիգենցիայի տիրապետող հաւատն է։ Ես սխալուած չեմ լինի, եթէ կրկնեմ, որ այս անհաւատութիւնը իսկական հաւատ է, բայց հաւատ դէպի գիտութիւնը, ռացիօնալիզմը, անհաւատութիւնը։ Իւր մտաւոր զարգացման սկզբնական շրջանում, մանկական կամ երիտասարդական հասակում, մեր ինտելլիգենցիայի ստուար մասը անսովոր թեթեւութեամբ է ընդունում անաստուածութեան դաւանանքը և սորան տալիս գիտական տիտղոս։ Շատ անգամ է նկատուած, որ կանխակալ համոզմունքը ճշմարտութիւնից աւելի հեռու է, քան կատարեալ անգիտութիւնը։ Մեր մէջ կրօնի նկատմամբ գոյութիւն ունի այն ժառանգական նախապաշարումը, որ իբրև թէ այստեղ առհասարակ խնդիր չկայ, որովհետև գիտութիւնը ու փիլիսոփայութիւնը մերժում են կրօնը։ Այդպիսի կարծիք յայտնողները ամենեւին ծանօթ չեն գիտական և փիլիսոփայական աշխատանքի հետ, որ եռ է եկել և մինչև այսօր եռ է գալիս կրօնի պատմութեան և փիլիսոփայութեան, կրօնի դաւանութեան և պաշտամունքի ուսումնասիրութեան, ինչպէս և այս հարցերի մասին ծագած անվերջ վիճաբանութիւնների շուրջը։ Կրկնում եմ, ռուսական անհաւատութիւնը հիմնուած է կոյր և միամիտ հաւատի մակերեւոյթի վերայ։ Ռուսական հոգևոր զարգացման այս առանձնայատկութիւնը, որ ունեցել է իւր պատմական և կենսական պատճառները, իրեն յատուկ թափանցութեամբ ցոյց տուեց Դոստոեւսկին, որ ռուսական և համաշխարհային անաստուածութեան ուսումնասիրութիւնը իւր մտածողութեան էր դարձրել։ Նա իւրեան Մըշկինի բերանով (Ապուշ) տալիս է հետեւեալ բնորոշումը. «ռուս մարդը աւելի հեշտութեամբ է դառնում անաստուած, քան աշխարհի միւս բոլոր մարդիկը։ Եւ մերոնք ոչ միայն անաստուածներ են դառնում, այլ անաստուածութիւնը ընդունում են իբրև մի նոր կրօն և բոլորովին չեն նկատում, որ զերօյի են հաւատացել. այս հանգամանքը ոչ այնքան վատ, ունայնափառ զգացումներից է առաջ գալիս, որքան հոգեկան ցաւից, հոգևոր ծարաւից, մեծ գործի, հաստատուն ափունքի անձկալից վշտից»։ Ես շատ անգամ մտածել եմ ռուսական ինտելլիգենցիայի այս ճգնաժամ դրութեան, ձեռքը երկուացած և մինչև այսօր անհասկանալի և անորոշ մնացած գիտնականների մասին և գրակ

եմ, որ այդ ինտելլիգենցիան կրօնական վիշտ ունի, նա ծարաւի սրտով տենչում է հաստատուն ափունք, նոր երկինք և նոր երկիր։ Եւ սա ոչ թէ քաղաքագէտների, ռէալիստների և տնտեսական զարգացման պաշտպանների հոգեբանութիւն է, այլ այն մարդկանց խմբի ոգևորութիւնը, որոնք Աստուծոյ արքայութեան և Նոր Երուսաղէմի գաղափարները երկրի վերայ հենց վաղը իրականացած ուզում են տեսնել։ Այս նմանութիւնը վերաբերում է միայն հոգեբանութեան և ոչ թէ գաղափարներին. իսկ գաղափարականի նկատմամբ Ռուսաստանը աւելի վճռողական և ուղիղ գծով արտացոլում է դարաշրջանի գաղափարները և տրամադրութիւնը, քան Արևմուտքը. արտացոլում է աստուածամարտութեան և աստուածուրացութեան այն համաշխարհային հոգևոր դրաման, որը կազմում է նոր պատմութեան երակը և որի առաջ նսեմանում են և յետ նահանջում բոլոր մեծ քաղաքական և սոցիալական խնդիրները, որոնք պատմական ծովի կրծքի վերայ բարձրացնում են զօրեղ և մեղմ ալեկոծութիւն։

Արդեօք դա ինչ կռիւ է և ինչու համար դա դրամայ է։ Հոգևոր կռիւը, որ նոր պատմութեան հիմնական նիւթը և հիմնական բովանդակութիւնն է կազմում, սկիզբն առնելով վերածնութեան շրջանից և աւելի որոշ կերպով ԺԸ—դարից, ընդունում է այս ձևակերպութիւնը. քաղաքակիրթ մարդկութիւնը ճիգ ու ջանք է թափում, որպէս զի «կարողանայ ընդմիշտ և վերջնականապէս կառավարուել առանց Աստուծոյ» ինչպէս ասաց Դոստոևսկին, «որպէս զի կարողանայ սպանել Աստծուն» ինչպէս համարձակօրէն ասաց աստուածամարտներից ամենակատաղին—Նիցշէն։ Ուրեմն կեանքը բացատրել բացառապէս ներակայութեան գաղափարով (իմմանենտ) առանց որ և է կապի գերբնականութեան հետ (տրանսցենդենտ)։ Այդ պատերազմը տեղի է ունենում մտքի, զգացմունքների, ներքին կեանքի, գիտութեան, փիլիսոփայութեան մէջ, ինչպէս որ նախապէս այդ ցոյց են տուել Աւետարանը և Յայտնութիւնը, և ամենամեծ չափով աշխատանք է գործ դրուել, գործ է դրւում և պէտք է գործ դրուի, որպէս զի կրօնական հաւատալիքները յօդս ցնդուեն կամ արդար ճանաչուեն։ Այս խնդրում մեր դարաշրջանը պատմութեան մէջ իւր հաւասարը չունի։ Առանձին հակակրօնական հոսանքներ և կրօնական անկման երևոյթներ միշտ եղել են. բայց մարդուն գետին գլորելու, երկինքը դատարկելու համար այսպիսի գիտակցական և համոզմունք դարձած, այսպիսի մոլեռանդ և անհաշտ ձգտումներ չեն եղել։ Եթէ ուզենանք գեղարուեստական պատկերով, կամ ողբերգական միստերիայի մէջ արտայայտել մեր դարի հոգևոր էութիւնը, այդ պատկերը կամ միստերիան պէտք է անուանենք «Աստուծոյ թաղում կամ մարդկու-

թեան ինքնասպանութիւն ։ Եւ այդ պատկերների մէջ ամբողջ թափով և շօշափելի կերպով հարկաւոր կլինէր ցոյց տալ թէ ինչ բանի վերայ է մահափորձ կատարում մարդկութիւնը և ինչ է անում իւր համար, ինչ է կորցնում մեզանից իւրաքանչիւրը և ինքը ինչ դառնում։ Այդ ֆանտաստիքական կտաւի վերայ ինչ տեսակ էլ, որ դասաւորւած լինէին կերպարանքները, մի բան անկասկած է, որ նորա ընդհանուր բովանդակութիւնը կլինէր ոչ թէ գիտութեան յաղթական մուտքը պատկերացնող հաղթերգու-թիւն և կատակերգութիւն, որի մէջ վերջի վերջոյ արդիւնքները յաղթում են և գործը վախճանւում է ատանում փեսայի—մարդկութեան և հարսի—պետութեան ուրախ հարսանիքով, այլ կլինէր լուրջ, տանջալից մի դրամայ։

Բայց ինչո՞ւ դա դրամայ է, ինչո՞ւ Աստուծոյ թաղումը անխուսա-փելիօրէն հենց թաղողների թաղում է դառնում. Նորա համար, որ մարդիկ իրենց գիտակցութեան մէջ թաղելով Աստուծուն՝ հար-կադրւած են թաղելու նաև իրենց մէջ եղած աստուածայինը, իսկ մարդկային հոգու խնկական, իրական բնութիւնը ապրում է աս-տուածայինով։ Մարդ կարող է իւր մասին մտածել, ինչպէս իրեն հաճելի է. նա կարող է իրեն համարել մարդ-կապիկ, անասնական յարաբերութիւնների արտացոլում, ինքնաշարժ մեքենայ, նիւթի կոյր, որը մեքենական անհրաժեշտութեան շնորհիւ գիտակցութիւն է ստացել. այդ բոլորը ասել են և ասում են մարդու մասին. սակայն հակառակ այդ կարծիքների մարդս այն է, ինչ որ է, ինչ որ նորան դարձրել են արարիչը և ստեղծող ձեռքերը և նորան օժտել բարձր հոգևոր կեանքի պահանջներով և առանձնայատկութիւններով. Քաղցած մարդուն կարելի է համոզել, որ կուշտ է. պատմական պատճառաբանութիւններով կարելի է խլացնել քաղցի ձայնը այն աստիճան, որ քաղցածը ինքն էլ սկսի հաւատալ, որ կուշտ է. սա-կայն սովամահութիւնից քաղցից մեռնող է տանջողի նա և անհանգիստ լինի։ Կարելի է իրեն և ուրիշներին հաւատացնել, որ վաղուց «եղջիւրները», որոնցից անառակ որդին կերակրւում էր, աւելի լաւ են քան թէ նորա հօր տանը պատրաստուած պարարտ եզը, բայց այդ բանը չի համոզում և նորա հոգու խաղաղութիւնը չի տայ. նորա հոգին չի հաշտուի ոչ իրեն և ոչ էլ կեանքի հետ, որովհետև «դու ստեղծեցիր մեզ (ուղղուած) դէպի Քեզ. մեր սիրտը անհանգիստ է, մինչև որ հանգիստ կգտնի Քո մէջ», ինչպէս երանելին Օգոստինոս բացականչում է «Խոստովանութեան մէջ». Յաւիտենականութեան համար է ծնուած մարդ և նա իւր մէջ կրում է յաւիտենականութեան ձայնը և լսում է իւր աստուածային իմաստունների, գիտնականների և բանաստեղծների, մարգարէների արքաների մէջ, յաւիտենութեան՝ իւր գերազանցութեան սահմ-

ծագործող հանճարով։ Մարդ պէտք է ձգտի ապրել ժամանակի մէջ յաւիտենականութեան համար. հետամտելով գիտակցութեան ներկայ իրականութիւնից՝ պէտք է սլանայ դէպի վեհագոյնը—գերբնականը (excelsior). մարդս կոչուած է սորա համար. և այդ ձգտումը ինքնին արդէն խօսում է Նորա մասին, Որը ապրում է բարձունքներում, և է կենդանի աստուածային յայտնութիւն մեր մէջ։ Մարդ երբէք չի կարող բացարձակ և ինքնաբաւական լինել, որովհետև նա երբէք իւր անձից և իւր ներկայ դրութիւնից գոհ չի մնում, եթէ միայն չի ստորանում մինչև կենդանական աստիճանը և չի նմանում իսկապէս անբան արարածի։ Այսու հանդերձ մարդ գիտակցում է իւր անձի ոյժը և կամքը, որոնք ընդունակ են բացարձակ բովանդակութիւնը պարփակելու, աճելու և ընդարձակուելու և այսպիսով դառնալու բացարձակի կենդանի պատկեր՝ ըստ պատկերի և նմանութեան Աստուծոյ: Ահա կեանքի բարձր բովանդակութիւնը որոնող, բայց անյայտ մնացող այս ծարաւն է տանջել և տանջում կրօնական հաւատ։ Մեր պատմական դարաշրջանը շատ մեծ արժէք է տալիս մարդի նուաճումներին. մեր ժամանակակիցներից շատերը կարծում են, որ մարդկութեան իսկական կեանքը միայն այժմ է սկսւում. իսկ նախանցեալ պատմութիւնը մի յառաջաբան է, կամ վայրենութեան և բարբարոսութեան խաւար։ Մեր ժամանակին շատ յարմար է Լիւցիֆերի և Կայէնի խօսակցութիւնը (Բայրոն). Կայէնը հարցնում է Լիւցիֆերին. «Դուք երջանիք էք». Լիւցիֆերը պատասխանում է. «ոչ, մենք զօրեղ ենք». «Դուք երջանիկ էք». «Ո՛չ»։ Եւ մեր դարաշրջանը աւելի զօրեղ է, քան երջանիկ։ Այդ դարը թէև արտաքին, առաւելապէս նիւթական, ինչպէս և հոգևոր քաղաքակրթութեան բարիքներով հարուստ է, բայց ամենագլխաւորի մէջ—այն է—հոգեկան ոյժի, թարմութեան և հաւատի մէջ աղքատ է նախանցեալ դարերից. և այդ աղքատութիւնը քաղաքակրթութեան փայլացուցիչ ֆոնի վերայ շօշափելի կերպով դուրս է ցցւում։

Աստուծոյ կրօնը վերացնելով՝ մարդկութիւնը աշխատում է նոր կրօն հնարել, ըստ որում այդ կրօնի համար աստուածներ է որոնում իւր մէջը, իւր շուրջը, իւր ներսում և դուրսը. հերթով փորձւում են բանականութեան կրօնը, բանահանութեան կրօնի պաշտամունքը (Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ), Կոնտի և Ֆեյերբախի մարդկութեան կրօնը. սոցիալիզմի կրօնը, մաքուր մարդկայնութեան կրօնը, գերմարդու կրօնը և այլն։ Աստուած կորցնող մարդկութեան հոգու մէջ պէտք է անպատճառ սոսկալի դատարկութիւն առաջ գայ, որովհետև, թէև մարդկութիւնը կարող է այս կամ այն վարդապետութիւնը ընդունել, բայց չի կարող խեղդել յաւիտենականութեան ձայնը իւր մէջ, չի կարող յագեցնել այն ծարաւը, որ կեանքի համար բացարձակ բովանդակութիւն է.

ըղձում։ Մարդկութիւնը հանգչում է արեգակը, բայց աշխատում է պահպանել նորա լոյսը և տաքութիւնը. որպէս զի ազատ և պահպանի աստուածայինը և դատարկութիւնը լցնի նոր բարիքներով՝ նա ջղաձգաբար ճիգ ու ջանք է թափում, սակայն ոտների տակից հողն է կորցնում և հոգևոր մթնոլորտը դարձնում աւելի լարուած և աւելի ծանր։ Եւ հոգևոր գոյութեան համար մարդկութեան մղած կռիւը, այս կամ այն տեղում հաստատուն հող գտնելու համար նորա թափած ճիգն ու ջանքը, վերին աստիճանի սրտաճմլիկ է։

Գործք Առաքելոցի մէջ կայ յաւիտեանս անմոռանալի մի պատմութիւն Պօղոս առաքեալի քարոզի մասին, որ նա ասել է Աթէնքում, հին աշխարհի մայրաքաղաքում, գիտութեան և արուեստների, փիլիսոփաների, իմաստունների և գեղարուեստագէտների այդ կենդրոնում։ Աթէնքը լի էր կուռքերով, ինչպէս մեր քաղաքակրթութիւնը, և մեծ առաքեալի «հոգին զայրացաւ նորա մէջ»։ Կուռքերը դիտելու ժամանակ՝ նա զոհաբերութեան սեղաններից մէկի վերայ նկատեց արձանագրութիւն «անծանօթին Աստուծոյ», որը և իւր քարոզութեան համար արտաքին բնաբան ընտրեց։ Առաքեալի օրինակին հետևելով՝ պէտք է մի այսպիսի բագին որոնենք և ժամանակակից Աթէնքում, և անշուշտ այդ բագինը կարելի է գտնել և այստեղ. մինչև անգամ ամեն ինչ մերժող խօսքերի, կործանիչ գաղափարների քօղի տակ կարելի է նկատել հաւատոյ վառ կայծ և բարեպաշտ զոհաբերութեան սեղան։ Եթէ հարցնենք. արդեօք ինչով է ապրում ժամանակակից մարդը, Աստուծոյ փոխարէն ինչ բանի է հաւատում. օրինակի համար հարցնենք միջին կարգի ռուս ուսանողի կամ հասարակաց մի «հասկացող» գիմնազիստի. սա իհարկէ իսկոյն կպատասխանի. «ես ուզում եմ մարդկութեան օգուտ բերել». յետոյ քիչ մտածելով կաւելացնի. «ինձ համար գիտական աշխարհահայեցողութիւն մշակելով»։ Ներկայ մարդկութիւնը յառաջադիմութիւնը և գիտութիւնը վարդապետում է իբրև իւր հաւատը. նա ընդունում է, որ կենսական բոլոր հակասութիւնները հնարաւոր է գիտութեան և մարդկութեան պատմական զարգացողութեամբ լուծել։

Այս վարդապետութեան հաւատոյ դաւանութեան համար հիմք են—բանականութիւնը և ամենազօր գիտութիւնը։ Սակայն բանականութիւնը որպէս հաւատալիք արդեօք համաձայնում է մարդու մասին եղած այն ընդհանուր վարդապետութեան հետ, որի համաձայն մարդը երկոտանի կենդանի է, որը պատահականութեան նիւթի ատոմների խաղերէ և իւր գոյութեան համար մղած կռուի շնորհիւ հասել է ներկայ վիճակին և ապագայում դեռ աւելի բարձրին պէտք է հասնի։ Որտեղից ձեռք բերեց այդ «փիլիսոփան

պքլորը», ինչպէս անուանեց մարդուն Դիօգինէսը, բանականութիւն և գիտութիւն և ինչի վերայ յենւում սոցա նկատմամբ եղած հաւատը: Ի՞նչ է ճշմարտութիւնը, որը գիտութիւնը ուզում է ճանաչել:

Պիղատոսի այս հարցը, որ ուղղուած էր Աստուածային Բանին և Որը իւր մասին ասաց. «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք», հնչում է մարդկային պատմութեան ամբողջ ընթացքում և իւր պատասխանը գտնում է մի միայն կրօնական հաւատի մէջ: Երկուսից մէկը. կամ մարդը իսկապէս ոչնչութիւն է, ցեխի կոյտ է, ինչպէս որ ցոյց է տալիս նիւթապաշտ փիլիսոփայութիւնը. բայց այն ժամանակ բանականութեան և գիտութեան նկատմամբ եղած պահանջները անհասականալի են. կամ թէ մարդս է աստուածակերպ արարած, յաւիտենականութեան որդի, աստուածային հոգի կրող արարած և այս դէպքում միայն բոլոր տեսակի գիտական ծանօթութիւնները բացատրւում են մարդու հենց այս էութեամբ: Ուրիշ խօսքով, մարդու մասին եղած կրօնական վարդապետութիւնը հաստատում է գիտութեան արժանաւորութիւնը և նորա իրաւունքները և ոչ թէ սահմանափակում. և երբ վերացւում է առաջինը՝ յօդս է ցնդւում և երկրորդը-գիտութիւնը: Գիտութիւնը սկզբունքով յենւում է կրօնի վերայ և ոչ թէ հակառակ կրօնին, ինչպէս տարօրինակ կերպով ժամանակակիցները երևակայում են: Իսկ Դարվինիզմի այն կարծիքը, որի համաձայն բանականութիւնը և գիտութիւնը գոյութեան համար մղուած կռուի արգասիք և զէնք են համարւում, մենք վերջնականապէս պէտք է հերքենք: Եթէ գիտական ճշմարտութեան ոյժը և նշանակութիւնը միայն օգտաւէտութիւնն է, ինչպէս ասում են դարվինականները բիօլօգիայի մէջ, իսկ վերջին ժամանակ գնոսէօլօգիայի մէջ, այն ժամանակ որտեղից դուրս բերին, որ ճըշմարտութիւնը միշտ օգտակար է և որ երբեմն, գուցէ և միշտ աւելի օգտակար չէ մոլորութիւնը: Այս կասկածը յայտնել է Նիցշէն, որ ոչնչով չի կարելի թուլացնել: «Մտածողութիւնից աւելի հիւանդոտ բան չկայ» դուրս թռաւ Օ. Ուայլդի բերանից, որ յունական սոփեստներին հետևելով՝ ուրիշ [illegible] պէս ասում է. «ամէն ինչ կարելի է ապացուցանել» և ոչինչ ճշմարտութիւն չհամարելով և ծաղրելով դէպի գիտութիւնը եղած ծանրակշիռ վերաբերմունքը: Գիտութեան կոկորդին դէմ են անում դանակը, որ սա ինքն է սրել: Սկսում է գիտական և փիլիսոփայական գիտակցութեան տագնապը, որ նման է հին աշխարհի կրած տագնապին և արդեօք գիտութիւնը իւր համար յենարան փընտռելու չէ այն կրօնի մէջ, որը այժմ հալածում է: Գիտութեան տագնապը. սոփեստական-պրագմատիստական վարդապետութիւնը,

ցանկալի է, աւելի պարզ կերպով կանոնանեն կրօնի և գիտութեան միջև եղած իսկական յարաբերութիւնը, որը միշտ խոստովանել են մեծ գիտնականները և խոհուն մարդիկ, բայց չի հասկացել թերի գիտութիւնը։

Վերջին ժամանակ յաճախ ձայներ են լսւում, որ գիտութիւնը տագնապի մէջ է և մինչև անգամ սնանկացել է, և երբեմն այս կարծիքները հանդէս են բերում ի պաշտպանութիւն հաւատի։ Ես, և՛ գիտնական գործչի և՛ կրօնական փիլիսոփայի տեսակէտից ասում եմ, որ այդ տրտունջները լաւ պատճառաբանուած չեն։ Գիտութիւնը ողջ առողջ ապրում է, և, ի հարկէ, պէտք է փառքով էլ ապրի։ Նորան մեր ողջոյնը. vivat, crescat, floreat: Գիտութեան տագնապն այն է համարւում, որ նա բոլորովին կորցրել է իրեն չպատկանող այնպիսի կոմպետենցիաներ ու ընդհանուր ձգտումներ, որպիսիք վերագրում էին նորան կրօնական հաւատը գիտութեամբ փոխարինել ցանկացողները։ Գիտութեան խնդիրները և նշանակութիւնը բոլորովին յարաբերական են և սահմանափակ. նա գործ ունի փորձնական գիտութեան (Կանտի իմաստով) խնդիրների յատուկ շրջանի հետ և միևնոյն ժամանակ ըստ իւր էութեան ընդունակ է անվախճան կերպով յառաջադիմելու։ Հորիզոնը չարունակ հեռանում է նորա առաջից, նոր ծանօթութիւնը անգիտութեան շրջանը աւելի է լայնացնում. սակայն գիտութեան կղզին ըստ առաջնոյն շրջապատուած է խորհրդաւորութեան և յաւիտենականութեան ծովով։

Ուշադրութեան արժանի է և այս, որ գիտութիւնը իբրև թանձրացեալ ամբողջութիւն գոյութիւն ունի միայն բոլոր գիտութիւնների և անընդհատ աճող մասնաճիւղերի համախմբման մէջ։ Գիտութիւնը շատ բազմաթիւ անիւներից և մասերից բաղկացած մի մեքենայ է։ Ամբողջական իմաստութիւնը, աշխարհի բանականութիւնը կամ միութեան գիրքը բացւում է մարդկութեան առաջ միայն սորա պատմութեան մէջ, և իւրաքանչիւր անհատ ինչքան էլ մտաւոր ոյժ ունենայ այդ գրքի մէջ միայն երեսներ կամ տողեր է կարդում։ Այս պատճառով էլ այն ենթադրութիւնը, թէ գիտութիւնը յիրաւի լուծում է բոլոր խնդիրները, գործնականապէս կարող է հիմնուած լինել այն հաւաքական հաւատի վերայ, որ կայ դէպի գիտութեան ոյժը, գիտական եղանակը, գիտական մտածողութիւնը, սակայն այդ հաւատը քննութեան չէ ենթարկւում։ Եթէ գիտութեան ամփոփած պաշարը միայն կրաւորապէս իւրացնելու համար ոչ թէ մէկ, այլ 10 կամ 100 մարդու կեանք նուիրէք, դարձեալ բոլորը չէք իւրացնի։ Հետևապէս մտածել կամ խօսել մի ամբողջական գիտական աշխարհահայեցողութեան մասին որից դուրս ձգուած չլինէր հաւատը, անկարելի է։

Այսպէս ուրեմն, գիտութիւնը հնարաւորութիւն չունի փոխարինելու կամ վերացնելու կրօնական հաւատը. նա նոյն իսկ չի կարող պաշտպանել իր գոյութիւնը կասկածամոլութեան յարձակումներից առանց լռելեայն կամ ակնյայտնի կերպով ճանաչելու կրօնի նախադրեալները-այսինքն հաւատ դէպի օբյեկտիւ բանականութիւն։ Ասածներս որոշում են կրօնի սկզբունքի և գիտութեան էական յարաբերութիւնները, որոնք համերաշխութեան և փոխադարձ հպատակութեան յարաբերութիւններ են, թէև գիտութեան առանձին վարդապետութիւնները ի մասնաւորի այս կամ այն հարցը չօշափելու ժամանակ կարող են և ժամանակաւորապէս ընդհարուել այս կամ այն կրօնական վարդապետութեան հետ։

Եթէ նոյն իսկ գիտութիւնը իր մեծ ուժով կասկածամոլութեան թունաւոր խայթոցի դէմը անպաշտպան է մնում, այն ժամանակ ևս առաւել անպաշտպան պէտք է մնան շինծու կրօնները, որոնց մէջ աստուածութեան գերը յանձնւում է մարդկութեան և որոնց հիմնական դաւանութիւնը յառաջադիմութեան վարդապետութիւնն է։ Այստեղ արդէն սկսւում են հակասութիւններ և դժուարութիւններ, որոնք հեշտութեամբ երևում են, երբ համեմատութեան են դրւում քրիստոնէական վարդապետութեան հիմնական կէտերի հետ մարդու մասին։ Քրիստոնէական վարդապետութեան տեսակէտից մարդ չարի և բարւոյ ընտրութեան մէջ բարոյապէս ազատ է. ըստ որում բարոյական կեանքը այն է, որ մարդ իր կամքը չարից դէպի բարին ուղղի։ Անձնաւորութեան վերածնութիւնը կատարւում է այդ կռւով, անձնազոհութեամբ, անձնուրացութեամբ և օգնութեամբ բարձրից։ Մարդու առաջին կանգնած է կատարեալ վերածնութեան գաղափարը. «Եղերուք կատարեալ, որպէս Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» և «Աստուած սէր է»։ Այս պատճառով քրիստոնէական գործնէութիւնը սիրոյ և անընդհատ անձնուիրութեան գործնէութիւն է։ Մարդ խորհում է և զգում, որ իր մերձաւորի հետ անքակտելի է և անբաժան։ Քրիստոսի ձեռքով փրկուած մարդկութիւնը Քրիստոսի համար կենդանի միութիւն է, մարմին և անդամ։ Այս պատճառով էլ քրիստոնէութեան մէջ սէր առ Աստուած և սէր առ ընկեր այնպէս անքակտելի կապով են միացած իրար հետ։ Նորածին մանուկը կրում է Աստուծոյ պատկերը և աստուածային սիրոյ կնիքը. «պատկեր եմ անճառելի փառաց քոց» երգւում է թաղման հանգստաւոր կարգի մէջ բաց դագաղի առաջ, որի մէջ կազմալուծւելու է դիակը։ Մահը Աստծոյ պատկերը կարող է աղարտել առ ժամանակ, սակայն չէ կարող ոչնչացնել ընդմիշտ։ Աշխարհի ողբերգութիւնը լուծելու համար քրիստո-

նէութիւնը իսկապէս խոստանում է, որ մարդկութիւնը պէտք է վերանորոգուի յաւիտենական կեանքի համար։ Նշանակում է թէ մարդ այստեղ, երկրի վերայ, ոչ թէ, ինքնակոչ աստուած է, այլ աստուածացրած արարած, աստուած ըստ շնորհաց։ Ի զուր չէ, որ եկեղեցում աստուածպաշտութեան ժամանակ սրբերին խնկարկելու միջոցին՝ խնկարկում են և աղօթաւորներին, որոնք համատարւում են սրբերին։

Եւ յիրաւի. երբ Աստուած մարդուն իւր պատկերն է տուել, միթէ մարդը կենդանի պատկեր չէ, եթէ նոյն իսկ այդ պատկերը աղարտելու լինի։

Ժամանակակից աշխարհահայեցողութիւնը ամէն տեղ թունաւորելով աստուածային հաւատը և մերժելով այս վարդապետութեան կրօնական հիմքը՝ նորա մէջ պահպանեց միայն մարդուն վերաբերող կողմերը. այն է սէր առ ընկեր և այս սէրը կոչեց այլապաշտութիւն, հաւատաց մարդու աստուածութեան՝ և մարդ արարածին մարդ աստուած դարձրեց, և հաւատալով մարդկութեան փրկութեան՝ պինդ կանգնեց յառաջադիմութեան վարդապետութեան վերայ։ Արդեօք առանց հիմքի շինութիւնը չի՞ քանդուի, արդեօք ժամանակակից մարդկութիւնը իւր ոտների տակի հողը չի՞ կորցնի. արդեօք Ֆաուստին երևացող դժգոյն տեսիլքի, երկրային ոգու նման մեր ձեռքից չի փախչի մարդկութիւնը, երբ ուղենանք գրկել։ Շատ նշաններ կան, որ այդ այդպէս և շատ պատճառներ՝ թէ ինչու համար այլ կերպ լինել չի կարող։

Մարդուն ներշնչում են, որ նա աշխարհում ամենաբարձրն է, ինքնորոշ է, գեղեցիկ է, խոհուն է, աստուած է եթէ ոչ ինքը իւր անձով և առանձնացած կեանքով, գոնէ ուրիշների հետ միասին կազմած ամբողջութեամբ։ Բայց Աստուծուն յատուկ է կեանքը, մինչդեռ այս աստուածը կազմալուծուող դիակ է, որի օրերը և տարիները աստիճանաբար մօտենում են մահուան գերեզմանին, որի մէջ, ինչպէս յայտնի է, «եւ հանճարի գանգը որդերի ժառանգութիւն է»։ Պղատոնը թաղեց իւր Սոկրատէսին, աստուածային մարդուն, իւր կեանքի լոյսը և աշխարհը նորա համար գերեզման դարձաւ. վաղ թէ ուշ այդպիսի գերեզման կլինի աշխարհը և մեղանից իւրաքանչիւրի համար։ Միթէ այդ հակասութիւնը չի այրում և չի տանջում այժմ, երբ այնքան կեանքեր են զոհ բերւում ուղիղ կամ սխալ հասկացուած գաղափարների պատճառով։ Եթէ երկաթեայ կամքի ուժով մէկը կարողանում է իւր մէջ ճնշել զգացմունքները և կարգապահութեան սովորութեամբ մնալ շարքի մէջ այն ժամանակ, երբ շուրջը ընկնում են մերձաւորները եւ թանկագինները, այդ չի նշանակում թէ նա կամքը զօրեղացնելով և

շրթունքները կծոտելով ցաւը փարատեց։ Մահը աշխարհ է բերում մի այնպիսի աններդաշնակութիւն, որը լսելի է խուլին անգամ։ Եւ մահուան երկիւղի հետ կռւում են երբեմն Մեչնիկովի պատուաստով, երբեմն ala Ֆեյերբախ մխիթարանքներով. այս իսկ պատճառով քրիստոնէական հաւատոյ և ուրախութեան քարոզութիւնը նախ և առաջ բարի լուր է յարութեան և յաւիտենական կեանքի մասին։

Ուրեմն, մահկանացու է այդ աստուած առանձին վերցրած, մահկանացու է իւր ամբողջութեամբ. Թողնելով բոլոր գործերը և հոգսերը՝ սերունդ սերնդի յետևից չարան—չարան դիմում են դէպի գերեզման։ Իսկ մեզ ուզում են հաւատացնել, որ այդ գործերը և հոգսերը մեր կեանքին բովանդակութիւն տալու ընդունակութիւն ունեն. մարդկութեան այս կրօնը մի գերեզմանական փիլիսոփայութիւն է և զարմանալի չէ, որ սա իւր վարկը կորցնելով տեղի է տալիս հպարտ «ես»ի պաշտամունքին։ Մարդ ինքն իրեն գոհացնում է, իւր «ես»ին—կուռքին է երկրպագում։ Ինչու համար կուռք որոնեմ ինձանից դուրս, ինձ նման կամ ինձանից վատ, ընդհանրապէս ամբոխի և ուրիշ շատերի մէջ, (Viel zu Viele) երբ ինքս կարող եմ ինձ երկրպագել, երբ ես «եզակի» եմ (der Einzige?) հնար գտիր քեզ համար ճանապարհ բաց անելու. հնար գտիր տեղաւորուելու վայ յաղթուածներին։ Անձնաւորութեան մասին եղած այս նորամոլ հիւծախտը աւելի շատ երեւում է հանրամատչելի փիլիսոփայական գրականութեան մէջ։

Նիհիլ անհատականութիւնը, դէպի որը տանում է մեր քաղաքակրթութիւնը, ժամանակիս հոգևոր կեանքի ամենալուրջ երեւոյթն է կազմում։ Այս անհատականութեան հետ են կռւում համայնական կուսակցութիւնները, որպէս զի միացեալ ուժերով հաւամախմբեն հատիկացած մարդկութիւնը, և անիշխան անհատականութիւնը սանձահարեն սօցիալական զօրեղ կազմակերպութեամբ։ Սակայն այդ միութեան նպատակը ինչպիսի հնարքներ կան։ Ինչից է յաղթւում անհատականութեան քայքայիչ թոյնը։ Այն ժամանակուանից, երբ բարոյականութեան կրօնական հիմնաւորումը—Աստուծոյ պատգամը, իբրև բարոյական նորմա՝ մերժուեց, գիտակցութեան առաջ կանգնեց հարց բարոյականի, բարւոյ և չարի և պարտքի մասին, որպէս բարոյականի հիմքի։ Ինչքան փիլիսոփայութիւնը յանձին Կանտի և սորա դպրոցի յուսահատական ճիգ է արել և անում է պարտքի բարոյականը ազատելու համար, որի վերայ և ներկայումս իւր տրամաբանութիւնը ուժասպառ է անում գերմանական գաղափարականութիւնը, բարոյականը դարձեալ կրօնի մօտ է գալիս, իբրև իւր համար անհրաժեշտ նախադրեալի։ Կանտի սիստեմի մէջ գործնական բանականութիւնը տանում է դէպի Աստուծոյ

գոյութիւն և հոգու անմահութիւն, որոնք համարւում են կրօնական նեցուկներ. մինչդեռ կրօնական գոյնից զուրկ աշխարհահայեցողութիւնների դաւանած բարոյականը բոլորովին յուսահատ բնաւորութիւն ունի: Մերժելով պարտքի գաղափարը և սոսկ տեղը դնելով անհատական կամ խմբական շահի գաղափար և գազանական ինքնապաշտութեան բնազդ՝ բարոյականութիւնը ինքն իրեն վերջ է տալիս: Նիցշէի ամօրալիզմի մէջ սրամտութեամբ արտայայտուած այդ տագնապը անչափ ճշտութեամբ գուշակել է Դոստոեւսկին ասելով. «Եթէ անմահութիւն չկայ, այն ժամանակ ամեն բան թոյլատրելի է»:

Անձնիշխանութիւն, իւրաքանչիւր «ես»ի կատարեալ գերիշխանութիւն, ծայրայեղ անհատականութիւն էր պաշտպանում Շտեյրները 40-ական թուականներին: Շտեյրները փշրեց Ֆեյերբախի այլասիրական հոմանսերգութիւնը, որ մերժելով քրիստոնէութիւնը՝ պահպանում էր, սէր առ մերձաւորը կամ օգտակար ցանկութիւն, որպիսին ունի ամեն մի բարի ուսանող: Շտեյրները ցոյց էր տալիս որ Ֆեյերբախը (ինչպէս և Կոնտը) այդ սէրը փոխ է առել քրիստոնէութիւնից, որը թէև մերժում էր և ընդհանրապէս բոլորովին անվիճելի կերպով ցոյց էր տալիս Ֆեյերբախի և նորա կողմնակիցների ամբողջ անհետևողականութիւնը անուանելով նորան բարեպաշտ «աթէիստ»: Սիրոյ և համակրութեան բարոյականութեան, որը յաղթութիւն չունեցաւ, յաղթեցին օգուտ և անձնական շահասիրութիւն քարոզող վարդապետութիւնը, որի հիմքը դրեց Բենտամը: Այս վարդապետութեան մէջ ասւում էր, որ այդ շահասիրութիւնը ուրիշների համար էլ պահանջւում է բարեհաջողութիւն, ի սէր որոյ և կանգ չի առնի զոհաբերութիւնների առաջ, մինչև իսկ կեանքի գնով. և քանի որ անձնական օգուտ տալով մարդկութիւնը մերձաւորին ծառայել է համարւում, նշանակում է թէ նա դեռ և չի վատնել իր ամբողջ քրիստոնէական ժառանգութիւնը: Սակայն կասկածելի է, որ անձնական օգուտի կաթով սնուած սերունդները մերձաւորի նկատմամբ այդ ժառանգութիւնը կարողանան արիւն և մարմին դարձնել: Այս վարդապետութեան ամենաանկեղծ ներկայացուցիչներից մէկը, Ջ. Ստ. Միլլը, քիչ մնաց անձնասպանութիւն գործէր, երբ ազնուութիւն և քաջութիւն ունեցաւ բացասական պատասխան տալու իր այս հարցին. Եթէ իր դաւանած վարդապետութեան պահանջած չափերով իրականանայ համամարդկային երջանկութիւնը, արդեօք ինքը գոհ կլինէ՞ր:

Շահի և օգուտի պաշտամունքով մարդկութիւնը շերտերի—կուսակցութիւնների է բաժանւում և համամարդկային միութեան գիտակցութիւնը—մարդու յարաբերութիւնը դէպի մարդը և ոչ կուսակցութեան և դասակարգի ներկայացուցիչ—աւելի և աւելի կորչում է:

Գաղափարակցութիւնները և միութիւնները մարդկանց տառապանքում են. նա
թագաւորում է մեխանիկական անհրաժեշտութեան ցրտութիւնը. ցրտութիւն այն «միմեանութեան», որի պատճառով ողբում էր Մեծարանը և այդ ողբը ուժգին է հնչում գրականութեան և կեանքի մէջ. Ցանկը, սարսափելիութեան գրականութիւնը բաժանում են մարդկութիւնը, որը միաւորում է միայն ընդհանուր ոգով և ընդհանուր հաւատով, և այն գրականութեանը թէ իր էական ազգակցութիւնը, հաւատարմութիւնը, եղբայրութիւնը Աստուծոյ մէջ է. Մարդկանցութեան ծանր մթնոլորտը, որը կտրուկ բոլոր միջոցները միայն է տալիս, ճնշում է մեր ոգին և մարդկանց փարաշխյանը։

Սակայն մեզ հաւատացնում են, որ այդ երկխօսութիւն չէ, որ ստանում է ոչ միայն ազատութեան և հաւասարութեան ամէն դարը, այլ և եղբայրութեան։ Իրենց այս ծրագրանական յոյսերը կապում են անհատականութեան և սոցիոլոգիայի հետ։ Գիտութիւնը գիտութիւն մեզանից և իրեն յառաջ զգացմունքները և համերաշխութիւնը ունենալով այդպիսի բաներ չի նախատեսում։ Առաջին, չատերի հետ և ես հերքում եմ սոցիալական գիտութեան նախագուշակութիւն անող ընդունակութիւնը. սոցիալական գիտութեան ուսումնասիրութիւնը այս է ասում. երկրորդ, որ էական է, եթէ անհատականութիւնը կարող է նախատեսել թէ մօտիկ ապագայում տնտեսական կազմը ինչ բնաւորութիւն կընդունի, չէ որ դորանով դեռ ես ոչինչ ասուած չի լինի այն մասին, թէ այդ ապագան ինչպիսի հոգևոր կեանք և ինչպիսի մարդկային անձնաւորութիւն կունենայ. Նրակէտ ընդունելով որ, անհատականութիւնը բարեփոխում է և հոգեբարակ վերակենդանացնում մարդու նկատմամբ նախապէս այս փաստապատութիւնը պէտք է ընդունել, որ սա է «միայն այն, որը ուսում է», որ մարդ բոլորովին անտեսական հանգամանքների արտացոլումն է կամ արգասիք իր դասակարգային դրութեան։ Բոլոր այս անընդունելի դրութիւնները ընդունելով հանդերձ՝ մի հարց ես մնում է. արդեօք տնտեսական պայմանների փոփոխութիւնը ինչպիսի փոփոխութիւններ առաջ կբերէ հոգեբանութեան, իմացականութեան և խղճմտանքների մէջ և արդեօք այդ փոփոխութիւնը կլամադրուի յանդգնաբար երանական նորոգութեամբ։

Մարդկային անձնաւորութիւնը կախում ունի հանգամանքներից և տնտեսական հանգամանքներից, ընդհանրապէս կեանքի պայմաններից, սակայն կարևորը այն է թէ նա ինչի է հաւատում, ինչով է կենդանի, ինչ է ուզում, ինչ է պաշտում։ Ո՞ր այս նկատէ ընդունելով, ամենամեծ կարևոր պէտք է նկատի ունենալ, որ անհատի կարգի մէջ մարդ կլինի ամայացած և կաշկանդուած։ Ո՞րն է աղանդաւորներ էլ թշուառ պաշտօնեաները նոր թանկան կարիքներ հոգևորը փոխէր

դառնալով՝ չի կարելի մոռանալ և մարդու հոգևոր կարիքները։ Ժամանակակից մարդը նմանում է այն տանտէրին, որ իւր տան մէջ չի ապրել և ինքը իրեն հետ երբէք չի եղել. նորա գիտակցութիւնը լիքն է. բայց երբ արտաքին տպաւորութիւնների գեղեցկացոյց գործիքը (կալէյդոսկոպ) կանգնում է, միայն այն ժամանակ երևում է թէ նորա կեանքը ինչքան աղքատ է և դատարկ սեպհական բովանդակութիւնից։ Պատմութիւնը պահել է մի գեղեցիկ և խորին նշանակութիւն ունեցող պատկեր, որը այլաբանօրէն ուսուցանում է մեր ներկայ հոգևոր ձախորդութիւնը։ Նախկին հումանիզմի ամենախոշոր ներկայացուցիչներից մէկը, Պետրարկան, իւր ճանապարհորդական նկարագրութեան մէջ պատմում է թէ ինչպէս ինքը ելաւ բարձր սարը, որտեղից երևում էր՝ հրաշալի տեսարան, և Օգոստինոսի «Խոստովանութեան» մէջ կարդաց հետևեալ խօսքերը. «Եւ ահա մարդիկ գնում են և զարմացմամբ նայում բարձր սարերի, հեռաւոր ծովերի, կատաղի հեղեղատների և ովկիանոսի և երկնային լուսատու մարմինների վերայ, բայց այդ ժամանակ իրենց մասին մոռանում են»։

Ահա թէ ինչպէս է պատկերացնում տնտեսական յառաջադիմութեան նպատակը և բովանդակութիւնը մեր ժամանակի փայլուն տնտեսագէտ պրօֆ. Զոմբարդը. երկար դարերի զրկանքներից յետոյ ծնունելու է մի սերունդ, որը պէտք է ունենայ գեղեցկութեամբ և բաւականութեամբ անուած մի կեանք. այս սերունդը կստեղծի բաղձանքներով և գեղեցիկ ձևերով լի մի աշխարհ, որի մէջ նորա ուղեկիցները կլինին վայելչութիւնը և կեանքի ուրախութիւնը։ Այս նշանակում է թէ այդ սերնդի գեղեցկութեան քանակական պահանջը այնպիսի վիթխարի մեծութեան և հրաշակերտութեան կհասնի, որ նորա մասին այժմ մենք ամենափոքր չափով անգամ գաղափար չենք կարող կազմել և որոնց առաջ կնսեմանան «Հռոմի կայսերական շքեղութիւնը», Վենետկի փայլը և Վերսալի շռայլութիւնը։

Ու, ի հարկէ, ոչ ոք էլ չի կարող երաշխաւորել, որ դեղնագոյն կամ թխագոյն ցեղերը կամ նոյն իսկ պայթուցիկ նիւթերին լաւ ծանօթ մի քանի հոգի այդ գեղեցկութեամբ ճոխ կեանքը սատանի բաժին չեն անի։ Դեռ 1846 թուին Դոստոևսկին գուշակել է այս բանի հնարաւորութիւնը, որ մի գեղեցիկ օր մի անշնորհք, փտած գաղափարներով ջենտլմեն կկանգնի ապագայ իմաստութեան մէջ և ձեռքերը կողքերին դրած կասի մեզ բոլորիս. «Ի՞նչ էք ասում պարոններ, արդեօք ոտքի մի շարժումով այս ամբողջ իմաստութիւնը փոշու պէս չթօթափենք, որպէս զի մենք մեր յիմար խելքով ապրենք»։ Ի՛նչ կարող են ասել այդ ջենտլմեններին

Դալլակի * գեղարուեստական ճաշակ ունեցող մարդիկ, ինչով կարող են նոքա մեղմացնել մարդու մէջ նստած գազանին, որին իրենք են կրթել և չեն նախատեսել, որ ձեռնասուն դարձած գազանը իւր ծագումով դարձեալ վայրենի է մնում։

Եւրոպական մարդկութեան հոգևոր կեանքի յայտանիշները դիտելով՝ ոչ ոք չի վստահանայ ասելու թէ մարդկութիւնը հասաւ կամ գնում է հասնել բաղդաւորութեան և ուրախութեան, ներդաշնակութեան և անդորրութեան. ընդհակառակը լարուած անհանգստութեան, դաժան և անպարտելի մահուան երկիւղի խորշոմները զարդարում են նորա ճակատը. դարու տրամադրութիւնը «ժողովուրդների վհատութիւն և անզգայութիւն» աւետարանական խօսքերով կարելի է որոշել, կամ Յայտնութեան գրքի հետևեալ նախադասութիւնով. «հրեշտակը լցրեց թոյնը գազանի աթոռի վերայ և նորա թագաւորութիւնը եղաւ խաւարային և նոքա ցաւից իրենց լեզուներն էին ծամում»։

Ցուրտ պեսսիմիզմը և կեանքի երկիւղը միացած մահուան երկիւղի հետ դէպի հոգին է սողում և թերահաւատները հեշտութեամբ դառնում են անհատապաշտ, հոգու մէջ ապրող գաղտնիքի զգացմունքը իւր լուծումն է որոնում խորհրդաւորութեան մէջ, կրօնի պահանջը արտայայտութիւն է գտնում աննիւթ կրօնականութեան մէջ և իւր ծարաւը յագեցնում է կրօնական զգացմունքի երաժշտութեամբ, այսպիսով առեղծւում է միստիցիզմ՝ առանց կրօնի և դիւապաշտութիւն՝ առանց առ Աստուած հաւատի։ Որ ժամանակից հոգին տանջւում է, որ ժամանակից սիրտը դէպի Աստուած տանող ճանապարհին վշտանում է՝ այդ ամենայն պարզութեամբ երևում է գեղարուեստի մէջ, որը ոչ ստում է և ոչ էլ կեղծում։

Անդրեևի «Մարդու կեանքը» երկի մէջ է դուրս բերուած մարդկային կեանքի փիլիսոփայութիւնը, որ յատուկ է ժամանակակից աշխարհահայեցողութեան։ Այս երկի տիրապետող գաղափարի համաձայն կամ պէտք է ապագայի համար բիւրեղեայ պալատներ կանգնեցնել կամ գնդակը տալ ճակատին։ Իսկապէս տեղի և անտեղի, միայն վշտից, աննպատակ կեանքից յառաջացած սպանութիւնները շատ յաճախակի են դառնում, մանաւանդ մեր նեարդային և անհեցուկ երիտասարդութեան մէջ. անշուշտ ազդում են և արտաքին դէպքերը, բայց նոքա միայն տագնապը մեծացնում են։

Իրեն յատուկ թափանցկոտութեամբ Դոստոևսկին այս երևոյթի գլխաւոր պատճառը հետևեալն էր համարում կրօնական հաւատի կորստեան, ուրեմն անհաւատութեան և պեսսիմիզմի ծնունդ, որոնք

* Ընդգծ. Թարգմ.

Համաշխարհային կայսրութեան անկման շրջանում քաղաքակրթիւ ինքն-ուրոյնութիւնների պատճառ դարձաւ։ Սենեկեան փիլիսոփայութեան-ւսկանքի աղքատութիւնների հակառակ կայ մահուան քարոզչու-թիւնը, որի մէջ գտնում ենք կամաւոր մահուան խակական օրէնները։ Այդպէս ծագում էր Բեթղեհեմի աստղը երկնքի երեսին․ այդ աստղն էին դիտում իմաստունները և աղքատները, մոգերը և հովիւները․ աշխարհն եկաւ մեծ խնդութեան, խնդութեան մինչ յաղթանակ․ «Զի խնդութիւն իմ ի ձեզ իցէ և ձեր խնդութիւն լցեալ եղիցի»։ Թէև ողջամտութիւնը նորից է շարժում մարդկութեան գլխին, որը մեռել է նախընթացից և այնուհետ տառապում լինում-ակայն Բեթղեհեմի աստղը այժմս էլ լուսաւորում է և տարածում իւր մեղմ ճառագայթը, որը ամեն մի քաղց սրտին խայթ է անում մեղմ կոչը․ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»։ Քրիստոնէութիւնը յաղթանակում է կրօնքից։ Աշխարհում չարութիւնը և աններդաշնակութիւնը տառապանքին մինչդեռ-րից չէին պակասում․ և այս անհաւասարութեան մէջ իսկ մեծանում է ստանում պետականապէս մինչև այն րոպէն, երբ մարդու մէջ հաւատ և յոյսը առաջնորդաբար աղբիւրն է․ ակնում բոլոր, որը կեանքի յաւերժ դարձնում է «խաղաղութիւն և հեշտ»։ Կրօնի խստացած տեսք ասանց ցաւի չէ, ընդհանրապէս նա ծանր գործ է, խաչ է․ սակայն կրօնք ապրում է և այժմ միշտը և դժուարութիւնը զարգանում է․ այն մարդը տառապանքում, որը մարդկութիւնը չորացնել է։ Ինչպիսի այր ձակոլ հակասական թէ է ստացւում, երբ մեր ժամանակութեան Ս. գրքի նկատմամբ հասարակութեան հոգեկան դրութիւնը, քաղաքակրթութիւնը, անհաւասարութեան թիւերը և պետականակցութեան համեմատում ենք առաջին քրիստոնեայ համայնքների հոգեոր դրութեան հետ, որ նկարագրուած է Գործ Առաքելոց մէջ։ Պատմութեան մէջ գտնում է գանձեր մի շրջան, երբ մարդիկ աւելի ուրախ ապրած լինեն, քան այդ խեղճ համայնքները, որոնք կազմուած էին ձկնորսներից, մաքսաւորներից, ծառաներից և քիչ թուով գիտնականներից։ Թէև ապա չունէին նրանք քաղաքակրթութեան բարիքները, որոնց նման մեր մեռածը քաղաքէր առաջին հին հասարակութիւնը—նեղմտութիւնը, բայց այդ ամենից հոգեկան ուրախութիւն և հաւասարութիւն կենդանի առաքինութիւն, որը չափազանց կարևոր էր։ Քրիստոնէութեան առաջնակարգ էր այն բանը, որ մարդ յաւիտենականութեան և Աստուծոյ համար է ստեղծուած, և կորցնելով այդ նա սանկում է և գլխապտոյտ է ստանում այժմեան որ գիտնականները Ս փիլիսոփաները ինչպէս որ ընթացք բնական չգիտեն կրօնները է, որ հնարաւոր նորա մարդու չէ տալ այն անփոփոխութիւնը և վստահութիւնը, որ տալիս է դէպի Նա եղած հաւատը. Ով խոստանում է․ «Եկայք առ իս և գտջիք հանգիստ անձանց ձերոց»։

Ժամանակակից հոգու տանջանքը, Աստուած անհնչացող սրտի վիշտը ամենայն սրբութեամբ մարմնացած է գեղարուեստի մէջ, որը ոչ խաբում է և ոչ էլ կեղծում։ Այս հանգամանքը ապացոյց է, որ անհաւատ մարդկութեան հոգու կրօնական թելերը ոչ թէ մեռել են, այլ միայն թուլացել։ Մարդկութիւնը հետաքրքրուած է գեղեցկութեամբ, գեղեցկութեան ծառայելու զգացմունքով է տարուած։ Գեղեցկութիւնը աստուածային է։ Աստուած ստեղծեց աշխարհը և զարդարեց գեղեցկութեամբ, եւ աստուածայինը գեղեցկութեան մէջ՝ հոգու վերայ ազդում է անմիջապէս, կամ ինչպէս Սոլովեովը ասաց, կախարդօրէն, հակառակ մտածական գաղտղութեան։ Ընդունելով գեղեցկութիւնը՝ մարդ շնչում է աստուածայինը, եւ գեղարուեստը իր առանձնայատուկ աշխարհով ժամանակակից զրկուած հոգուն մատակարարում է կրօնական սնունդ։ Թէութեան գեղեցկութեան զգացմունքը թերևս աւելի զարգացած է մեր դարում, քան թէ առաջ, քան թէ երբեւիցէ. երկնային եթերքների, բարձր սարերի երանգութիւնը, ծովի անդունդը, ծաղիկների գեղեցկութիւնը որպէսզի հաղորդակից են դառնում ժամանակակից մարդու հոգու համար, որը միրոյ համապատասխան է որոնում աշխարհի մէջ։ «Ս. Հոգով խորանայիր հոգի կենդանի է» խօսքերն են երգւում աստուածպաշտութեան մէջ և գեղեցկութիւնը Ս. Հոգւոյ պարգեւ է և հոգով ապրող մարդկութեան համար փրկութեան խարիսխ։

Գեղարուեստը նոյն խսկ ազնուական զգացմունքներ և տրամադրութիւններ է իրեն հաղորդակցում, որ քրիստոնէին չեն հակառակ [illegible] ժամանակակից աշխարհահայեցողութեան։ Եթէ ժամանակակից մարդը [illegible] խոնարհ [illegible] և ծովի ալիքների մէջ յաւերժական [illegible] [illegible] է և [illegible] մէջ [illegible] Միքելանջելոյի [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible] Աստուածաշունչ [illegible] [illegible] [illegible] ժամանակակից մարդը [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible]։

[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] է [illegible]

տալիս։ Գեղարուեստական յուզմունքները դեռ ևս վերածնող հաւատ չեն ստեղծում. գեղարուեստութիւնը հանրագիտական է, նա նմանում է ծաղկից ծաղիկ թռչկոտող մեղուի, նա կարող է բոլորովին անմիաբանելին միաբանել։

Զուտ գեղարուեստականի համար գոյութիւն չունեն չարն ու բարին, ոճրագործութիւնը և մեղքը. իսկապէս, ըստ էութեան միայն մնում է գեղեցիկ պոզա, գեղեցիկ դրութիւն, բայց ոչ հոգևոր բովանդակութիւն։ «Գեղեցկութիւնը կփրկի աշխարհը» ասաց Դոստոևսկին։ Եւ այժմ կարելի է ասել, որ գեղեցկութիւնը փրկում է աշխարհը յուսահատութիւնից, ռացիոնալիզմից, ինքնաբաւական մանրացած կեանքից և արդէն գեղեցկութիւնը պապակուող հիւանդին ջուր է խմացնում և, կարելի է, նորա ոյժերը պահպանում է մինչև առողջանալը։

Քաղաքակիրթ մարդկութեան մտածողութեան մէջ փոփոխութիւն եղել է. կարելի է անցկացած համարել ԺԸ դարու այսպէս կոչուած «լուսաւորութիւնը» իւր ուղղագիծ բանականութեամբ և հասարակացած բացասութեամբ։ Մեֆիստոֆելի դարին փոխարինեց Ֆաուստի դարը և գերմանական սպեկուլեատիւ գաղափարականութեան յաղթանակը։ Ապա հետևեց պօզիտիվիզմի և մակերևոյթական նիւթապաշտութեան կարճ ժամանակեայ յաղթանակը, որը մերժում էր ամեն տեսակի փիլիսոփայութիւն։ Սակայն, թէ նիւթապաշտութիւնը և թէ պօզիտիվիզմը ներկայումս անցած են։ Վերստին վերածնւում է կրօնական գաղափարականութիւնը, փիլիսոփայական և կրօնական հետաքրքրութիւնը, որը առատութեամբ իւր սնունդն է առնում քրիստոնէական և միւս կրօնների պատմութեան ուսումնասիրութիւններից։ Կրօնական փիլիսոփայական և պատմական ուսումնասիրութիւնների առարկան է Փրկչի անձնաւորութիւնը։ «Կարելի է ասել, ասում է գերմանացի գիտնական պրօֆ. Վայնելը, որ դեռ ևս ոչ մի դարաշրջան այնքան լարուած կերպով չի զբաղուել Յիսուսով և նորա մասին չի հարցրել՝ ինչքան ներկայ դարաշրջանը»։ Ահա ինչ է ասում պատկառելի պրօֆ. Բուսէյկենը. «Կրօնի համար բարեյաջող նոր տրամադրութիւն և նոր ձգտումներ են զօրեղանում։ Ճշմարիտ է. կեանքի արտաքին հոսանքը դեռ ևս կրօնի դէմ է ուղղուած, սակայն յայտնի է, որ այդ հոսանքը մարդկային ամբողջ կեանքը չի ընդգրկում, որ սորան դիմադրում է ներքուստ այլ տեսակի հոսանք։ Մենք մարդուն ազատեցինք ներքին ամեն տեսակի խնամակալութիւնից, որով մտածում էինք նորան պարգևել չլսուած մի մեծութիւն, սակայն այս ազատութիւնը արտայայտուեց կեանքի բոլոր ներքին կապերից հրաժարուելու մէջ և ինքն իրեն թողնուած մարդը արտաքին [illegible] ժամանակ ցոյց տուեց ներքին մանրութիւն։ Մենք

զգում ենք, որ դարաշրջանի մեծ խնդիրների և դոցա լուծում տուող անհատների ընդունակութեան մէջ ողբալի անհամաձայնութիւն կայ և շատ մտքեր զօրեղ կերպով ձգտում են մարդու ներքինը բարձրացնելու։ Մենք մեր կեանքի ամբողջութեան նկատմամբ խճճուել ենք և զգում ենք, ինչպէս ոչ երբէք, մեր գոյութեան ստեղծուածային բնաւորութիւնը։ Քաղաքակրթութեան արտաքին ամբողջ փայլը ամպամ մեզ չի ազատում կեանքի անհաստատ ցաւալի վիճակից և ներքին աղքատութիւնը լոյսի նման թափանցում է այդ փայլի միջով։ Այսպիսով սա ոչ միայն կրօնի, այլ ընդհանրապէս ամբողջ կեանքի տագնապ է։ Կրօնի պատճառով մղուած կռուի համար սա շատ բարեյաջող դրութիւն է ստեղծում, որովհետև կրօնի համար ոչ մի բան աւելի վտանգաւոր չէր լինի քան այն կարծիքը թէ հոգևորով և գաղափարական համոզմունքով լցուած քաղաքակիրթ կեանք հնարաւոր է առանց կրօնի օգնութեան, նոյն իսկ հակառակ նորան։ Այժմ մենք տեսնում ենք, որ կրօնի խափանելով խախտւում է և ամբողջ հոգևոր կեանքը և կարելի է յուսալ, որ եթէ կեանքը վերստին կազդուրուի՝ դա կլինի ի նպաստ կրօնի և նորա զարգացման»։*

Անձնաւորութեան և աշխարհահայեցողութեան վերոյիշեալ տագնապը աւելի զգալի է Ռուսաստանի համար շնորհիւ վերջին տարիներս այստեղ տեղի ունեցած պատմական շարժման և պատմական տագնապի։ Ներկայումս ռուս հասարակութեան բանիմաց մասը իւր ծանր տարակուսանքից ազատուելու և ստեղծագործական աշխատանքի ձեռք զարնելու համար դիմում է անցեալին և այստեղից է ուզում պատմական դասեր դուրս քաշել։ Նա պակաս չափով է ուշադրութեան առնում հոգևոր տագնապը։

Վերջին տարիների քաղաքական և տնտեսական շարժումը ինտելլիգենտ բնաւորութիւն ունէր շարժմանը մասնակցողների իդէաների, իդեալների, ընդհանրապէս նոցա ամբողջ իդեոլոգիայի պատճառով։ Գաղափարների և գաղափարական տրամադրութիւնները այստեղ տարերային թափով արտայայտուեցին և ցոյց տուին, որ այժմ արդէն ինտելլիգենցիան Ռուսաստանում պատմական ոյժ է, որի նշանակութիւնը պատմական յետագայ զարգացման ընթացքում միայն կարող է մեծանալ։

Ռուսաստանի պատմական ապագան, բարգաւաճումը կամ կազմալուծումը ինտելլիգենցիայից է կախուած, իբրև աճող ուժից և այս հանգամանքը նորան դարձնում է երկնապատիկ պատասխանատու։ Այսպիսի գնահատութիւնը ելակէտ ընդունելով մեծ

* Արդի կրօնափիլիսոփայութեան գլխաւոր պրօբլեմները, 1907 Թ. եր. 143 և շար.

զգուշութեամբ և մեծ անհանգստութեամբ պէտք է մեզ հարցնենք. արդեօք ինտելլիգենցիայի հոգու մէջ ամեն ինչ կարգին է, արդեօք այդ հոգին արմատներից պոկ չի եկել, արդեօք նա առողջ է: Սորանով մենք ուզում ենք իմանալ պատճառները այն մաշող դժգոհութեան, որը մեր հոգու մէջ աճում է, չըջանցել այն մտատանջութիւնը, որ մեզ է պատել: Շատ անկեղծ մարդիկ, ինտելլիգենցիայից են, որոնք իրենց գաղափարութիւնները չեն կապում տեսական վարդապետու- թեան կամ ծրագրի հետ, խոստովանում են, որ իրենց հոգու միջոց մնում է դատարկութեան և ծանր ապրումների մրուր: Բարութեան և չարութեան, թոյլատրելիի և ոչ թոյլատրելիի, ազատութեան և բռնակալական կամ անիշխանական կամայականութեան, կուսակ- ցական կարգապահութեան և հանրամարդկային բարոյականութեան միջև եղած սահմանը շատ յաճախ կորել է և շատ հեշտութեամբ ոտնակոխ եղել ժամանակի ընթացքում: Այս բանը արդէն կասկած և անհանգստութիւն է թողել հոգու մէջ:

Կուսակցական սանձարձակութիւնը և քաղաքական ներքին երկպառակութեան մթնոլորտը կասկածելի են դարձրել փոխադար- ձաբար իրար հասկանալու և համաձայնութեան գալու հնարաւո- րութիւնը: Մինչդեռ դա անհրաժեշտ է գործնական ստեղծագործա- կան աշխատանքի, ընդհանուր ազգային գործի համար:

Մարդ չկայ. կան միայն զանազան կուսակցութիւնների անդամ- ներ կամ զանազան չափերի ներկայացուցիչներ, որոնք միայն իրենց սահմաններին են արուում: Սակայն հայրենասիրութեան բարգաւաճման և կենսունակութեան համար անհրաժեշտ են. արոչելով բարոյական միաբանութիւն և փոխադարձ համակրութիւն. այլապէս այդ հասարակութիւնը կդառնար մի քանի ճղճիմ բանակների և վերջի վերջոյ փոքր կրպակներ:

Ինտելլիգենցիայի այս դասն և բարոյական—քաղաքական մի- ձայնը հետևողական և տարածուած հանրակրթական աշխարհայեացքի զուրկ է: Հոգևոր առողջութեան բարոյականութիւնը վտանգուած է կենդանի բարոյ եղանակների և հոգու ուղղութեան մէջ: Անկիրթ ժողովուրդը, մասսան, ինտելլիգենցիայի հետ և նոյն [illegible] [illegible] [illegible] բերուելու այժմ և ղեկը չունենալով [illegible] [illegible] [illegible], [illegible] ժողովուրդը [illegible] ընթանում [illegible], [illegible] հաւատը [illegible] և ամբողջութեամբ գործել չի. այս [illegible], [illegible] է, որ միանգամ իսկ դիպչելուց քայքայւում է. բայց և այնպէս այդ հաւատը ժողովրդին ուսուցանում էր տարբերել չարն ու բարին, ապրել ճշմարտութեամբ, պարտաճանաչութեամբ և առաքինութեամբ:

թեամբ։ Այդ հաւատը ժողովրդի հոգու մէջ ստեղծել է մի զզանչելի ցեղեցկութիւն, որը դրօշմուած է պատմութեան, Վարք-Սրբոցի, գրականութեան և գեղարուեստի մէջ։ Այդ հաւատի շնորհիւ է, որ ժողովուրդը իւր ուսերի վերայ է տարել և տանում իւր պատմական կեանքի խաչը։ Ահա ինչ է ասում ժողովրդի այս հաւատի մասին պատմագէտ և ժողովրդասէր Դոստոեւսկին։ «Մեր ժողովրդի մէջ կայ գազանութիւն և մեղք. բայց նորա մէջ մի անվիճելի բան կայ. այդ այն է, որ նա իբրև ամբողջութիւն երբէք ճշմարտութեան դէմ չի մեղանչել և չի ուզենայ մեղանչել։ Նա կմեղանչի, բայց միշտ կասէ, վաղ թէ ուշ, ես անարդար բան արի. եթէ յանցաւորը չի ասի՝ ուրիշը կասէ նորա տեղակ և արդարութիւնը կատարուած կլինի։ Մեղքը գարշահոտութիւն է, և գարշահոտութիւնը անցնում է, երբ արևը բոլորովին պայծառանում է։ Մեղքը անցաւոր է, իսկ Քրիստոս յաւիտենական։ Ժողովուրդը մեղք է գործում և ամեն րոպէ պղծվում է, բայց լաւ րոպէներում, Քրիստոսի րոպէներում՝ նա երբէք արդարութեան մէջ չի սխալուի։ Հենց կարևորն էլ այն է, թէ ժողովուրդը ինչի է հաւատում որպէս իւր արդարութեան և ինչ բանի մէջ է արդարութիւնը ենթադրում և ինչպէս է իրեն պատկերացնում, ինչն է համարում կարևոր, ինչ է սիրել, ինչ է խնդրում Աստուծոյ, ինչ բանի համար արտօսրով լաց լինում։ Ժողովրդի իդէալը Քրիստոս է։ Իսկ Քրիստոսով է ի հարկէ լուսաւորութիւնը, և իւր լաւ և ճակատագրական րոպէներին՝ ժողովուրդը միշտ վճռում է և վճռել է ամեն տեսակի գործ քրիստոնէաբար...» Սակայն ժողովրդի հոգեկան տառապանքները աւելացնում են քարոզելով անաստուածութեան վարդապետութիւնը և քանդում են նորա միամիտ—մանկական հաւատը։ Հոգով հիւանդ, տանջուած, տգէտ, քաղաքակրթական անկայուն պայմանների մէջ ապրող մարդկանց կեանքի առաջնորդութեան համար յանձնում են այնպիսի դաւանանքներ, որոնք արդիւնք են փիլիսոփայութեան և քաղաքակրթութեան երկարամեայ զարգացման։ Այդ ուրէն չիմացող, աղքատ, իւր գիւղի կամ գործարանի սահմաններից դուրս չելլող գիւղացուն հաղորդում են Իւմի և Վօլտերի, հանրագէտների և լուսաւորիչների, Ֆէյերբախի և Նիցշէի մտքի աշխատանքի արդիւնքներ։ Սա աններևակայելի ծայրայեղութիւն է և յիրաւի գլուխ չմեցնող մի բան։ Իսկ հետևանքը լինում է, անձնաւորութիւնը քայքայւում է, կամքը և բարոյական հասկացողութիւնը հաշմանդամ են դառնում։ Ես համոզուած եմ, որ quasi գաղափարական ոճրագործութիւնների դաւայի և անվերջանալի միապաղաղութիւնը ծնունդ է այն նոր վարդապետութիւնների տուած կերակրի, որոնք մերժեցին կոչը և բացարձակ բարոյականութիւնը։ Մեր ժողովուրդը կարիք ունի գիտութիւնների, լուսաւորութեան.

բայց այնպիսի լուսաւորութեան, որը նորան հոգեպէս աւելի չաղ-քատացնի և չքայքայի նորա բարոյական անձնաւորութիւնը։ Մեր ժողովուրդը կարիք ունի քրիստոնէական լուսաւորութեան, որը աճեցնում է և կրթում անձնաւորութիւնը. մեր ժողովուրդը կարիք չունի գիտութիւնից պատահաբար պոկած հատուածների, որոնք կուսակցական կռիւների համար իբրև միջոց են ծառայում։

Իզուր չէին երկնային կայծակների որոտմունքները մեր գլխին։ Մի քիչ հանգստանալուց և ապաքինուելուց յետոյ՝ մենք չենք կարող նորից շարունակել ապրել հին կեանքով, հին զգացմունքներով, հին մտքերով, հին թեթևամտութեամբ՝ կարծելով թէ ոչինչ չի պատահել, ոչ մի ցաւ չենք քաշել։ Ո՛չ, մենք չենք կարող վերադառնալ հին դիրքերը, որոնցից մեզ բաժանել է մեռեալներով լի անդունդը. մենք արբունքի մէջ ենք, պատմականօրէն ծերացել ենք. երիտասարդանալը անօգուտ է և անվայել։ Պէտք է մի նոր բան սկսել, պէտք է օգտուենք պատմութեան դասից և պատմութեան մէջ ճանաչենք մեզ։ Հարկաւոր է սուզուել ներքին աշխարհը և ինքնազննել. հարկաւոր է ժողովել հոգևոր ուժերը և ստեղծել քաղաքակրթութիւն։ Մեր ինտելլիգենցիան կրօնական զօրեղ եռանդ ունի. նա առանց նահանջելու իւր սեղանի վերայ զոհ է մատուցանում «անծանօթին Աստուծոյ», մինչ այս անգիտութիւնը ընդմիշտ պէտք է շարունակուի։

Մեր ամենամեծ յոյսը ամփոփուած է դարաշրջանի այս հոգևոր դատարկութեան և նորա անել կացութեան մէջ։ Հոգևոր մահը հոգևոր յարութեան համար նախատօնակ կարող է լինել, ինչպէս որ եղաւ 19 դար առաջ, ինչպէս որ այդ շատ անգամ է պատահել պատմութեան մէջ, երբ հազիւ առկայծեալ խարոյկից նոր զօրութեամբ է բորբոքուել քրիստոնէական հուրը։

Պատմական դէպքերի զարգացումը պարզ կերպով ցոյց է տալիս, որ ռուսական դրաման կրօնական իմաստ ունի, որը արտայայտուելով քաղաքական և տնտեսական տագնապով արմատ է բռնում ռուս ժողովրդի հոգեկան անկման և ներքին կռուի մէջ։ Եւ այդ զոհերով ու փորձութիւններով լի դրաման չի վերջացել։ Հիւանդութիւնը ներս է գնացել և խրօնիքական դարձել։ «Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա եւ այլ ամենայն յաւելցի ձեզ»։ Մենք բացառապէս «այլ ամենայն»ը հոգալով անհոգութեան մատնեցինք մարդու ներքին աշխարհը՝ պատմութեան այդ ստեղծագործական ոյժը։ Եւ մենք կորցրինք հոգևոր հաւասարակշռութիւնը և ցիրուցան ընկանք զանազան կողմեր «այլ ամենայն»ի յետևից, որը աւելի և աւելի մանրուելով՝ բաժան-բաժան արաւնի մարդոց։

Ինչպէս յիշում է Ցիսուսի և Նիկոդիմոսի խօսակցութեան մէջ, նոր մարդը մարդկային հոգու ծոցում և ինքնաճանաչ անձնաւորութեան գաղտնարաններում կարող է ծնուել։ Պատմական ստեղծագործութեան ազնիւ գործը և մարդկային անձնաւորութեան վերածնութեան հոգևոր գործը անբաժան են, և այդ վերածնութիւնը մեր կամքի հակառակ չի կատարւում։ Ճշմարիտ է ասում Գլադստօնը. «բարւոյ և չարի ընդհարումը այժմ ոչ թէ պարլամենտներում կամ ժողովրդական ժողովներումն է առաջ գալիս, այլ մարդկանց հոգիների մէջ», և Ռուսաստանի պատմական բաղդը չափւում է այն անտեսանելի ներքին կռուով, որը տեղի է ունենում ռուս մարդու հոգու մէջ։ Հոգեկան այդ կռուին և մեզ, որոնց մէջ այդ կռիւը առաջ է գալիս, յարմարում է Մովսէսի ահարկու խօսքը— Իսրայէլի առաջնորդ նախամարգարէի հոգևարքի մէջ արած կտակը, որը. Նախատահմանում է Իսրայէլի ժողովրդի երկրային վիճակը, «երկինք և երկիր վկայ եմ կոչում. կեանք և մահ, անէծք և օրհնութիւն եմ քեզ տալիս. ընտրիր կեանքը և կապրես դու և կապրի քո զաւակը»։





